ՀԱՅԱՍՏԱՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2024

Funded by: Federal Office for Migration and Refugees

RETURN

IOM UN MIGRATION

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՄՄԿ)
ԳԵՐՄԱՆԻԱ

Շարլոտենշտրասե 68
10117 Բեռլին
Գերմանիա

Հ. +49 911 43 000
Ֆ. +49 911 43 00 260

iom-germany@iom.int
www.germany.iom.int

Այս ծրագիրը ֆինանսավորվում էՄիգրացիայի և փախստականների դաշնային գրասենյակի (BAMF) կողմից

Federal Office for Migration and Refugees

RETURN

[illegible]ՅԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ մեջ պարունակվող տեղեկատվությունն ուսումնասիրվել է լավագույն մտադրություններով և խնամքով: Այնուամենայնիվ, ՄՄԿ Գերմանիան որևէ պատասխանատվություն կամ պարտավորություն չի կրում որևէ սխալի կամ բացթողման համար: Ավելին, ՄՄԿ Գերմանիան չի կարող պատասխանատվություն կրել սույն ՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ տեղեկությունների հիման վրա արված եզրակացությունների կամ որոշումների համար: Կամավոր վերադարձի և վերաինտեգրման վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել www.ReturningfromGermany.de տեղեկատվական պորտալը կամ կապվել ձեր տեղական վերադարձի և վերաինտեգրման գրասենյակի հետ

© IOM 2024 թվականի դեկտեմբերի տեղեկատվությունը կարող է հնացած լինել երկրում դինամիկ զարգացումների պատճառով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ _____

2. ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ_____

3. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ _____

4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ _____

5. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ _____

6. ԵՐԵԽԱՆԵՐ_____

7. ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ_____

8. ՄԻ ՀԱՅԱՑՔՈՎ _____

9. Վիրտուալ խորհրդատվություն: _____

Ընդհանուր տեղեկատվություն

Հայաստանի առողջապահական համակարգ բաղկացած է պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնությունից և անհատական կամավոր բժշկական ապահովագրությունից: Առաջնային բժշկական օգնությունը անվճար տրամադրվում է յուրաքանչյուր մարդու: Յուրաքանչյուր ոք, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, տարիքից, առողջական վիճակից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, Հայաստանի Հանրապետությունում ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք:

Քաղաքացիներն իրավունք ունեն ընտրել իրենց բուժսպասարկողին: Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի օգտվել անվճար բժշկական սպասարկումից՝ պետության կողմից երաշխավորված ծրագրերի շրջանակում: Անձը, որը տառապում է շրջապատի համար վտանգավոր հիվանդությամբ, իրավունք ունի ստանալու պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և ծառայություններ և բուժում ստանալ մասնագիտացված բժշկական հաստատություններում:

Այն անձինք, ովքեր տուժել են արտակարգ իրավիճակներից, ունեն պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնությունից և ծառայություններից օգտվելու իրավունք: Կամավոր անհատական ապահովագրության դեպքում հիվանդի ֆինանսական մասնակցությունը կազմում է 100%: Առողջապահության համակարգի, օրենսդրության վերաբերյալ (ներառյալ անվճար բուժծառայություններից օգտվող անձանց խմբերը և պետության կողմից երաշխավորված հիվանդությունների ցանկը) տեղեկատվություն կարող եք ստանալ ՀՀ Առողջապահության նախարարության պաշտոնական կայքում www.moh.am.

Բժշկական հաստատությունների և բժիշկների առկայությունը

Կա 122 հիվանդանոց (Երևանում՝ 52), բացառությամբ բժշկական մանկաբարձական հաստատությունների, մասնավոր բժշկական և ատամնաբուժական կաբինետների: 12.109 հիվանդանոցային մահճակալները (40,7-ը՝ 10000 բնակչի համար) հագեցած են անհրաժեշտ տեխնիկայով և պատրաստ են հիվանդներին ընդունելու համար: Առողջապահության առաջնային ծառայություններ մատուցող 473 հաստատությունները ներառում են բոլոր ամբուլատոր ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունները (պոլիկլինիկաներ, ամբուլատորիաներ, դիսպանսերներ, հիվանդանոցների ամբուլատոր բաժանմունքներ, առողջապահական կենտրոններ և այլն): Բժշկական և սանիտարական կազմակերպություններում բարձրագույն բժշկական կրթությամբ աշխատում է 15061 բժիշկ (509՝ 10000 բնակչի համար): Միջնակարգ բժշկական կրթություն ունեցող 16323 պարամեդիկ (54.8-ը՝ 10000 բնակչի համար), աշխատում են բժշկական և սանիտարական կազմակերպություններում, սոցիալական ապահովության հաստատություններում և այլն: Բուժհաստատությունների և բժիշկների վերաբերյալ տեղեկատվություն կարելի է ստանալ ՀՀ Առողջապահության նախարարության պաշտոնական կայքում www.moh.am:

1 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Բժշկական հաստատություն ընդունվելու կարգը

Առաջին հերթին վիրադարձողը պետք է գրանցվի (կամ վերագրանցվի) իր բնակության վայրի պոլիկլինիկայում՝ պետության կողմից երաշխավորված առաջնային բուժօգնության ծառայություններից օգտվելու համար: Գրանցումն անվճար է, անհրաժեշտ է միայն վավեր անձը հաստատող փաստաթուղթ: Եթե վերադարձած անձը ստացել է բուժում արտասահմանում, ապա անհրաժեշտ է ներկայացնել հայերեն թարգմանված հիվանդության պատմությունը: Հայաստանում գրանցված դեղորայքի տվյալների շտեմարանն առկա է www.pharm.am կայքում: Տեղական պոլիկլինիկաների միջոցով անվճար դեղորայք ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է www.moh.am կայքում

Վերադարձողներին հաճախ անհրաժեշտ է դեղ ներմուծել: Բուժման կամ անձնական օգտագործման համար թույլատրվում է ներմուծել մինչև 10 անուն դեղամիջոց, յուրաքանչյուրից երեք սպառողական փաթեթ, եթե չկա վկայագիր (դեղատոմս կամ քաղվածք էպիկրիզից), որը հիմ նավորում է բուժման համար ավելի մեծ քանակության անհրաժեշտությունը

Հասանելիությունը

վերադարձողների համար

Իրավասություն և պահանջներ՝

Լինելով ՀՀ քաղաքացիներ, վերադարձողները և նրանց ընտանիքի անդամները օգտվում են առողջապահության համակարգից և բոլոր անվճար ծառայություններից:

Գրանցման կարգը՝ Առաջին հերթին վերադարձողը պետք է գրանցվի (կամ վերագրանցվի) իր բնակության վայրի պոլիկլինիկայում ՝ պետության կողմից երաշխավորված առաջնային բուժօգնության ծառայություններից օգտվելու համար:

Անհրաժեշտ փաստաթղթերը՝ Ընդունումն անվճար է, անհրաժեշտ է միայն վավեր անձը հաստատող փաստաթուղթ:

2 ԱՇԽԱՏԱԾՈՒԿԱ

Ընդհանուր տեղեկատվություն

Հայաստանում աշխատուժի մասնակցության մակարդակը 2023 թվականի երրորդ եռամսյակում աճել է մինչև 61,70 տոկոս՝ 2023 թվականի երկրորդ եռամսյակի 61 տոկոսից: 2011 թվականից մինչև 2023 թվականը Հայաստանում աշխատուժի մասնակցության մակարդակը միջինը կազմել է 60,21 տոկոս՝ հասնելով պատմության ամենաբարձր մակարդակին՝ 65,90 տոկոս: Հայաստանում գործազրկության մակարդակը 12 տոկոս է: Միջին աշխատավարձը ամսական 265471 դրամ է:

Աշխատանք գտնելը

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայությունն իրականացնում է պետական ծրագրեր, որոնք ուղղված են աշխատանք փնտրող անձի կայուն զբաղվածության և աշխատուժի պահանջարկի բավարարման և առկա աշխատուժի առաջարկի արդյունավետ իրացման ապահովմանը: Ծրագրերի մանրամասն նկարագրությանը կարելի է ծանոթանալ Միասնական սոցիալական ծառայության պաշտոնական կայքէջից՝ https://socservice.am/:

Հայաստանում կան նաև մասնավոր զբաղվածության գործակալություններ, որտեղ հայտարարվում են թափուր աշխատատեղեր՝.

- www.careercenter.am/am
- jobfinder.am
- https://job.am

Հետագա կրթություն և վերապատրաստում

Վերադարձողները, լինելով ՀՀ քաղաքացիներ, իրավունք ունեն օգտվել կրթական համակարգից և ցանկության դեպքում կարող են ձեռք բերել լրացուցիչ բարձրագույն կամ մասնագիտական կրթություն:

Մասնագիտական դասընթացների կազմակերպումը Միասնական սոցիալական ծառայության գործառույթներից է:

Գրանցման և առկա դասընթացների վերաբերյալ տեղեկատվություն կարելի է ստանալ https://socservice.am/ կայքում:

Հասանելիությունը վերադարձողների համար

Իրավասություն և պահանջներ՝ Լինելով ՀՀ քաղաքացիներ, վերադարձողները և նրանց ընտանիքի անդամները կարող են օգտվել զբաղվածության պետական ծրագրերից:

Գրանցման կարգը՝ Առաջին հերթին վերադարձողը պետք է գրանցվի Միասնական սոցիալական ծառայության գրասեյակներից որևէ մեկում:

Անհրաժեշտ փաստաթղթերը՝

Անձնագիր կամ անձը հաստատող փաստաթուղթ, կրթությունը և մասնագիտական որակավորումը հավաստող համապատասխան փաստաթղթեր, աշխատանքային գրքույկ կամ աշխատանքային գործունեության մասին տեղեկատվությունը հաստատող այլ փաստաթղթեր և գրավոր դիմում:

3 ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ընդհանուր տեղեկատվություն

Բնակարանների առաջարկը բավականին մեծ է ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային բնակավայրերում: Երևանում բնակարանների գինը կազմում է 100000 - 500000 ԱՄՆ դոլար և ավելի բարձր: Երևանից դուրս գները շատ ավելի ցածր են՝ 50000 - 100000 ԱՄՆ դոլար:

Բնակարանների վարձակալության ամենացածր շուկայական գները սկսվում են ամսական 250000 ՀՀ դրամ վարձավճարից Երևանում և 100000 ՀՀ դրամ՝ մարզերում: Կոմունալ ծառայությունների վճարները նույնն են ամբողջ երկրում և կարելի է տեղեկատվություն գտնել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պաշտոնական կայքում՝ http://www. psrc.am:

Կացարան գտնելը

Վերադարձողները պետք է կացարան փնտրեն մասնավոր անշարժ գույքի գործակալություններում: Բնակարանների առաջարկը, ինչպես վարձակալության, այնպես էլ վաճառքի, բավականին մեծ է: Հայաստանում անշարժ գույքի որոշ գործակալությունների կայքեր

- www.myrealty.am
- www.akcern.am
- www.elate.am
- www.erkir.am
- www.list.am

Սոցիալական գրանտներ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը Կառավարության որոշմամբ իրականացնում է սոցիալապես անապահով և բնակարանային կարիք ունեցող առանձնահատուկ խմբերի սոցիալական բնակարանային ծրագիր:
Այս խմբին են պատկանում մարդիկ, ովքեր չունեն բնակելի տարածք, ովքեր ապրում են ժամանակավոր կացարանում կամ հանրային նշանակության այլ օբյեկտներում:

Հասանելիությունը վերադարձողների համար

Ժամանակավոր կացարան՝ Վերադարձողների համար առկա չեն ժամանակավոր կացարաններ:

Սոցիալական կացարան՝ Անօթևանների, հաշմանդամների և տարեցքաղաքացիների համար կան ժամանակավոր կացարաններ, այդ թվում՝ աջակցություն բնակարան գտնելու հարցում: Օժանդակությունից օգտվելու համար վերադարձողները պետք է դիմեն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (http://www.mlsa.am): Գրանցվելուց հետո նախարարությունը կորոշի, թե ինչպես աջակցել դիմորդներին: Այնուամենայնիվ, բյուջեն և տեղավորման համար մատչելի վայրերը սահմանափակ են:

Անհրաժեշտ փաստաթղթեր՝ Անձը հաստատող փաստաթուղթ

Սոցիալական բարեկեցության համակարգը

Հայաստանում սոցիալական պաշտպանության համակարգը կարգավորվում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից: Հայաստանում պետական սոցիալական աջակցության տեսակներն են՝

- ընտանեկան նպաստ,
- սոցիալական նպաստ,
- հրատապ օգնություն,
- երեխայի ծննդյան միանվագնպաստ,
- մինչև երկու տարեկան երեխայիինամքի նպաստ,
- ժամանակավոր անաշխատունակության նպաստ,
- մայրության նպաստ,
- ծերության նպաստ,
- հաշմանդամության նպաստ,
- կերակրողին կորցնելու դեպքումնպաստ,
- թաղման նպաստ:

նկարագրությունը, դիմելու ընթացակարգերը, ինչպես նաև Միասնական սոցիալական ծառայության 49 գրասենյակների կոնտակտային տվյալները առկա են https://socservice.am/կայքում: Հնարավոր է նաև դիմել առցանց և հետևել դիմումին::

Հասանելիությունը վերադարձողների համար

Իրավասություն և պահանջներ՝ Հիմքերի առկայության պարագայում, ՀՀ քաղաքացիները, կացության կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացիները, կացության կարգավիճակ չունեցողները, ինչպես նաև փախստականները իրավունք ունեն սոցիալական աջակցության:

Գրանցման ընթացակարգը՝ Վերադարձողները պետք է գրանցվեն սոցիալական ապահովության պետական ծառայության 49 տարածքային գրասենյակներից մեկում (7-ը՝ Երևանում և 42-ը՝ մարզերում):

Անհրաժեշտ փաստաթղթեր՝ Վավեր անձը հաստատող փաստաթուղթ, դիմում, որը նկարագրում է վերադարձողի վիճակը և պահանջը հավաստող փաստաթղթեր:

Թոշակային համակարգը

63 տարեկան և առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ ունեցող անձինք ունեն տարիքային կենսաթոշակի իրավունք: Այն անձը, որն իրավունք չունի տարիքային աշխատանքային կենսաթոշակ ստանալ, 65

4 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ

տարեկան հասակում ծերության կենսաթոշակ է ստանում: Հայաստանում կենսաթոշակների երկու տեսակ կա՝ աշխատանքային և զինվորական: Աշխատանքային կենսաթոշակը լինում է տարիքային, արտոնյալ, երկարամյա ծառայության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու և մասնակի: Զինվորական կենսաթոշակը լինում է երկարամյա ծառայության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելել http://www.mlsa.am/ կայք:

Հասանելիությունը վերադարձողների համար

Իրավասություն և պահանջներ՝ 63 տարեկան անձինք, ովքեր ունեն առնվազն 10 տարվա աշխատանքային ստաժ, ունեն կենսաթոշակի իրավունք: Վերադարձողները պետք է իրավասու լինեն ըստ օրենքի (ինչպես Հայաստանի մյուս քաղաքացիները) և հաշվառված լինեն իրենց բնակության վայրում, այսինքն՝ ունենան Հայաստանի Հանրապետությունում գտնվող հասցե:

Գրանցման ընթացակարգը՝ Վերադարձողները պետք է գրանցվեն միասնական մսոցիալական ծառայության տարածքային 49 գրասենյակներից մեկում և դիմեն թոշակի համար

Անհրաժեշտ փաստաթղթեր՝ Վավեր անձը հաստատող փաստաթուղթ, դիմում, որը նկարագրում է վերադարձողի վիճակը և պահանջը հավաստող փաստաթղթեր:

Խոցելի խմբեր

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն իրականացնում է հետևյալ խոցելի խմբերին աջակցող ծրագրեր՝

- Հաշմանդամներ և տարեցներ
- Կենսաթոշակառուներ
- Որբեր
- Թրաֆիքինգի զոհեր
- Կանայք և երեխաներ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ծառայությունների մատուցումն իրականացվում է Միասնական սոցիալական ծառայության 49 գրասենյակների կողմից: Պետական ծրագրերը հասանելի են՝ http://www.mlsa.am կայքում: Միասնական սոցիալական ծառայությունը Հայաստանի Հանրապետության անունից մատուցում է բժշկական և սոցիալական փորձաքննության ծառայություններ: Ծառայության պարտականությունները ներառում են հաշմանդամության ճանաչում, հաշմանդամության խմբերի որոշում, հաշմանդամության պատճառների նույնացում, ինչպես նաև տևողության և ժամկետի սահմանում: Ծառայությունը սահմանում է սոցիալական պաշտպանության ձևերը և հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային պայմանները, տալիս է որոշակի աշխատանք կատարելու վերաբերյալ եզրակացություն և այլն:

Գրանցման և օժանդակության համար անձինք կարող են այցելել Սոցիալական միասնական ծառայության գրասենյակներից մեկը՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ: Առողջական խնդիրների համար նրանք կարող են դիմել նաև Առողջապահության նախարարություն: Թրաֆիքինգի զոհերին աջակցում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և նրանք օգտվում են անվճար առողջապահական ծառայություններից

Ընդհանուր տեղեկատվություն

Հայաստանի կրթության համակարգը ներառում է կրթության բոլոր մակարդակները՝ նախադպրոցականից մինչև հետբուհական: Հայաստանի Հանրապետությունում իրականացվում են հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրեր: Հանրակրթական ծրագրերը նպատակաուղղված են անհատի համակողմանի զարգացմանը, նրա աշխարհայացքի ձևավորմանը, նախասիրություններին, հակումներին և ընդունակություններին համապատասխան մասնագիտական ծրագրերի ընտրության և յուրացման համար հիմքերի ստեղծմանը:

Հանրակրթականի հիմնական ծրագրերն են՝

- նախադպրոցական.
- Տարրական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ)
- Հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ)
- միջնակարգ (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ)

Մասնագիտական կրթական ծրագրերը նպատակաուղղված են կրթության հանրակրթական և մասնագիտական մակարդակների հաջորդականության միջոցով համապատասխան որակավորման մասնագետների պատրաստմանը, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, գիտելիքների ծավալի ընդլայնմանն ու որակավորման բարձրացմանը: Մասնագիտական հիմնական կրթական ծրագրերն են՝

- նախնական մասնագիտական (արհեստագործական).
- միջին մասնագիտական.
- բարձրագույն մասնագիտական. հետբուհական մասնագիտական:
- Վարձը, վարկերը և կրթաթոշակները

կրթաթոշակներըՊետական և մասնավոր բուհերի համար վճարները տարբեր են: Դրանք սովորաբար կախված են նրանից, թե որքանով է պահանջված ընտրված ոլորտը աշխատանքի շուկայում: Պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսման վարձը տատանվում է 800000 - 1200000 ՀՀ դրամ մեկ ուսում նական տարվա համար: Բուհերի բակալավրիատում բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները ստանում են 5000 ՀՀ դրամ կրթաթոշակ, գերազանց առաջադիմություն ունեցողները՝ 6050 ՀՀ դրամ: Մագիստրատուրայում բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները ստանում են 5500 դրամ, իսկ գերազանց ուսանողները՝ 6300 դրամ. Բուհերը տվյալ ուսումնական տարվա համար կարող են սահմանել անվանական կրթաթոշակներ և ուսման վարձի զեղչեր: Ուսման վարձը ծածկելու համար վարկերը տրամադրում են տարբեր բանկեր: Հիմնական և միջնակարգ դպրոցներն անվճար են: Բարձրագույն կրթությունն անվճար է և աջակցվում է պետական բյուջեով հետևյալ անձանց համար՝

- Հայաստանի պաշտպանության ժամանակ զինծառայողների երեխաներ.
- իրենց պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիներ.
- •1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամներ, ինչպես նաև մինչև 18 տարեկան մանկությունից հաշմանդամներ,
- ծնողական խնամքից զրկված և 23 տարին չլրացած ուսանողներ:

5 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Որակավորումների ճանաչումը և գնահատումը

Որակավորումների ճանաչումը և գնահատումն իրականացվում են Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի կողմից (ԱՓՇԱՏԿ): ԱՓՇԱՏԿ-ը տրամադրում է

- տեղեկատվություն, խորհրդատվություն կամ պաշտոնական որոշումներ որակավորումների ճանաչման և գնահատման վերաբերյալ
- համապատասխան, վստահելի և ճշգրիտ տեղեկատվություն որակավորումների, կրթական համակարգերի, ինչպես նաև ճանաչում իրականացնող կազմակերպությունների. պետական մարմինների և այլ շահագրգիռ կողմերի վերաբերյալ
- խորհրդատվություն, որակավորումների ճանաչման վերաբերյալ վերջնական որոշումներ՝ գոյություն ունեցող չափորոշիչների և ընթացակարգերի համաձայն իրականացված գնահատման հիման վրա
- տեղեկատվություն ճանաչման հարցում նրանց իրավունքների վերաբերյալ

Ճշգրիտ տեղեկատվություն ազգային մակարդակով բարձրագույն կրթության վկայագրերի և որակավորումների ճանաչման վերաբերյալ:

Օտարերկրյա որակավորումների ճանաչման համար դիմումի ձևը, անհրաժեշտ փաստաթղթերի ցուցակը և մատուցվող ծառայությունների արժեքները առկա են հետևյալ հղմամբ՝ www. armenic.am/application.php

Հասանելիությունը վերադարձողների համար

Գրանցման ընթացակարգը՝ Դիմում, 2 լուսանկար, ծննդյան վկայական, պոլիկլինիկայից տրված տեղեկանք առողջական վիճակի վերաբերյալ:

Անհրաժեշտ փաստաթղթեր՝ Մեկ այլ դպրոց / համալսարան ընդունվելու համար պահանջվում է փաստաթուղթ, որում նշվում է, որ աշակերտը կամ ուսանողը տեղափոխվել է դպրոցի կամ համալսարանի հաջորդ դասարան/ կուրս:



Երեխաների ընդհանուր վիճակը

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է երեխայի իրավունքների վերաբերյալ հիմնական միջազգային պայմանագրերը: 2018 թվականին կառավարությունը որդեգրեց երեխաների իրավունքների պաշտպանության նոր ծրագիր:

2020-ից մինչև 2023 թվականը Հայաստանի կառավարությունը կրկնակի ավելացրել է խնամատարության ֆինանսավորումը, մինչդեռ տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների պաշտպանական ծառայությունների աութսորսինգի ֆինանսավորումն ավելացել է հինգ անգամ ՝ փորձելով ապահովել ազգային ծածկույթ: Զուգահեռաբար, շարունակական բարելավումներ են կատարվել դեպքերի կառավարման և ինտերնատային խնամքի այլընտրանքների, ինչպես նաև երեխաների և ընտանիքի աջակցության համայնքային ծառայությունների մատչելիության և ծածկույթի բարելավման ուղղությամբ: Արդյունքում ավելացել է նաև իրենց կենսաբանական ընտանիքներին վերամիավորված երեխաների թիվը:

Չնայած արձանագրված առաջընթացին, Հայաստանում դեռևս կա մոտ 1135 երեխա, որոնք ապրում են պետական մանկատներում և հատուկ դպրոցներում: Ինտերնատային խնամքի և կրթական հաստատություններում գտնվող երեխաների ճնշող մեծամասնությունը հաշմանդամ երեխաներ են: Աղքատության և ընտանիքների՝ երեխաների հիմնական կարիքները բավարարելու անկարողության, ինչպես նաև ընտանիքների այլ խոցելի խնդիրների պատճառով, հաշմանդամություն ունեցող երեխաների խնամքի ինստիտուցիոնալացման հիմնական պատճառներից մեկը երեխայի և ընտանիքի աջակցության մասնագիտացված համայնքային ծառայությունների բացակայությունն է, կամ՝ դրանց սահմանափակ հասանելիությունը:

Դպրոցական տարիքի երեխաներն ունեն հանրակրթական դպրոցներ անվճար հաճախելու հնարավորություն: 2014 թվականից հանրակրթական համակարգում անցում է կատարվել համընդհանուր ներառական կրթության: Ներառական կրթությունը՝ յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության ապահովումն է: Կիրառվում է երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ: Ընդհանուր առմամբ վաղ մանկության զարգացման հիմնարկների հասանելիությունը գյուղական համայնքներում բավականին ցածր է: Ավելին, նախադպրոցական տարիքում հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված նախադպրոցական կենտրոնների պակաս կա: Առողջապահական ծառայություններն անվճար են 18 տարեկանից ցածր երեխաների համար: Կան պետության կողմից տրամադրվող տարբեր անվճար բժշկական և սոցիալական աջակցության ծրագրեր՝ հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար:

6 ԵՐԵԽԱՆԵՐ

Հասանելիությունը վերադարձողների համար

Պահանջներ՝ Ծննդյան վկայական, արտերկրում ուսումնական հաստատություն հաճախելը հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում):

Անհապաղ քայլեր՝ Հաշվառվել տեղական պոլիկլինիկայում, դիմել դպրոց կամ քոլեջ ընդունվելու համար: Պետական մանկապարտեզներն անվճար են, բայց կա հերթ: Մասնավոր մանկապարտեզի համար վճարը կազմում է մոտ 100000 ՀՀ դրամ ամսական:

Երեխաների բարօրությամբ և իրավունքներով զբաղվող ոչ պետական դերակատարներ

Անցած 30 տարիների ընթացքում Հայաստանում գործում է Վորլդ Վիժընը կազմակերպության 15 գրասենյակ, և ավելի քան 110000 երեխա ամբողջ երկրում ուղղակիորեն օգտվում է կազմակերպության զարգացման ծրագրերից: Տարիներ շարունակ Վորլդ Վիժնի հիմնական առաջնահերթությունները եղել են երեխաների՝ տարիքին համապատասխան զարգացումը և առողջությունը, երեխաների լիարժեք պաշտպանությունը, երիտասարդության հզորացումը և զբաղվածությունը, ընտանիքների տնտեսական հզորացումը և աղքատության կրճատումը: ՅՈՒՆԻՍԵՖ-ն ավելի քան 25 տարի աշխատում է Հայաստանում և նպաստել է պատվաստումների շնորհիվ երեխաների 90%-ի պաշտպանվելուն կանխարգելելի հիվանդություններից, նախադպրոցական կրթության հասանելիության ընդլայնմանը, հաշմանդամություն ունեցող երեխաների համար ներառական կրթության առաջխաղացմանը: ՅՈՒՆԻՍԵՖ-ի շնորհիվ 0-6 տարեկան անապահով աղջիկների և տղաների և նրանց ընտանիքների համար մատչելի են դարձել որակյալ և ներառական առողջապահական և սննդային ծառայությունները, հաշմանդամություն ունեցող երեխաներն ընդգրկված են հասարակության մեջ և կարող են իրականացնել իրենց որակյալ կրթության և վերականգնման իրավունքը, դպրոցից դուրս մնացած երեխաներն ինտեգրված են կրթության համակարգում, դատական համակարգը երաշխավորում է երեխայի լավագույն շահերը:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Սոցիալական աջակցություն
Կառավարության շենք 3, Հանրապետության հրապարակ
0010 Երևան
+374 10 526831
info@mlsa.am
www.mlsa.am

Առողջապահության նախարարություն
Առողջապահության ապահովում, ուղղորդում
Կառավարու թյան շենք 3, Հանրապետության հրապարակ
0010 Երևան
+374 10 582413
info@moh.am
www.moh.am

Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն
Դավթաշեն, 4-րդ թաղամաս, 17/10 շենք, 0054 Երևան
+374-10-370264
https://migration.am/
https://avv.police.am/hy/

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Վազգեն Սարգսյան 3, 0010 Երևան
59-96-00 , 59-96-01
info@escs.am
http://www.escs.am

Միասնական սոցիալական ծառայություն
Սոցիալական աջակցություն, կենսաթոշակներ
Նալբանդյան 13
0010 Երևան
info@socservice.am
www.socservice.am

ՄՄԿ Հայաստան Աջակցություն վերադարձողներին
Պ Ադամյան 14
0010 Երևան
+374 10 585692
IOMArmenia@iom.int
www.iom.int/countries/armenia

Վորլդ Վիժն Հայաստան
Աջակցություն երեխաներին
Ռոմանոս Մելիքյան 1
0065 Երևան
+374 10 749118
wvarmenia@wvi.org
www.wvi.org/armenia

Ներգաղթի և ինտեգրման ֆրանսիական գրասենյակ
Աջակցություն վերադարձողներին
Գ. Լուսավորիչ 8
0015 Երևան
ofii.armenie@ofii.fr
+374 60 651950
https://am.ambafrance.org

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ
Աջակցություն երեխաներին
Պետրոս Ադամյան 14
0010 Երևան
+374 10 584892
yerevan@unicef.org
http://www.unicef.am

ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն
Բժշկական հաստատություն, ՄԻԱՎ, ՁԻԱՀ
Աճառյան 2
0040 Երևան
armaids@armaids.am
www.armaids.am

Կայուն զարգացման հայկական հիմնադրամ
Աջակցություն t վերադարձողներին
Ազատության պողոտա10/7
0037 Երևան
+374 10 201840
info@ffad.am
www.af4sd.org

«Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ
Փոքր բիզնեսի աջակցություն
Սեբաստիա 123
0032 Երևան
+374 11 219787; +374 11 219797
info@kamurj.am
www.kamurj.am

Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ
Փոքր բիզնեսի աջակցություն
Բագրևանդ 21/1 0062 Երևան
+374 11 219787; +374 11 219797
info@eif.am
http://www.eif.am

Կանանց աջակցության կենտրոն
Աջակցություն բռնության զոհերին
Թեժ գիծ՝ 099 88 78 08
+374 10 56 57 66
wsc.armenia@gmail.com
www.womensupportcenter.org

Նաիրի բժշկական կենտրոն
Բժշկական հաստատություն
Պարոնյան 21
Երևան
+37410 537500
info@nairimed.am
www.nairimed.am

7 ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Էրեբունի բժշկական կենտրոն
Բժշկական հաստատություն
Տիտոգրադյան 14
0087 Երևան
+37410 451058
hospital@erebouni.am www.ere-bunimed.com

Ավան հոգեկան առողջության կենտրոն
Հոգեբուժական օգնություն
Աճառյան 21, 1 փակուղի
0040 Երևան
+37410 236829
mpcavanclinic@mail.ru
www.ahak-center.com

Պրոֆ. Յոլյանի անվան արյունաբանության կենտրոն
Բժշկական հաստատություն
Ներսիսյան 7
0014 Երևան
+37410 2838 00
armhaem@arminco.com
www.blood.am

Արաբկիր բժշկական կենտրոն
Բժշկական հաստատություն
+37410 236883-1111
arabkirjmc@gmail.com
www.arabkirjmc.am

Արթմեդ բժշկական վերականգնողական կենտրոն
Բժշկական հաստատություն
Ծարավ Աղբյուրի 55ա
0052 Երևան
+37410 621790
+37410 623599
www.artmed.am

Աստղիկ բժշկական կենտրոն
Բժշկական հաստատություն
Դանիել Վարուժան 28
0032 Երևան
+37411 667788
info@astghikmc.am
www.astghikmc.am

Նորք-Մարաշ բժշկական կենտրոն
Նորք-Մարաշ բժշկական կենտրոն
c Արմենակյան 13
0047 Երևան
+37410 655930
heart@nmmc.am
http://www.nmmc.am

Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության կենտրոն
Բժշկական հաստատություն
Ֆանարջյան 76
0052 Երևան
+374 10 23 68 29
info@oncology.am
www.oncology.am

Արմենիա բժշկական կենտրոն
Բժշկական հաստատություն
Մարգարյան 6
0078 Երևան
+37410 318109
info@armeniamedicalcenter.am
www.armeniamedicalcenter.am

Իզմիրլյան բժշկական կենտրոն
Բժշկական հաստատություն
Ահարոնյան 6
0069 Երևան
+37410 242023
izmirlianmedicalcenter@gmail.com
www.izmirlianmedicalcenter.com

Թոքաբանության ազգային կենտրոն
Բժշկական հաստատություն
Արզնի խճուղի 10 ք
Աբովյան
+374-222-20011 info@ntp.am
http://www.ntp.am

Քանաքեռ-Զեյթուն բժշկական կենտրոն
Բժշկական հաստատություն
Հրաչյա Ներսիսյան 7
0014 Երևան
+37410 285809
qzmc@mail.ru
www.kanaker-zeytunmc.am

Միքայելյանի անվան վիրաբուժության ինստիտուտ
Բժշկական հաստատություն
Էզրաս Հասրաթյան 9
0031 Երևան
+37410 281790
info@surgery.am
www.surgery.am

8 ՄԻ ՀԱՅԱՑՔՈՎ

Մինչև վերադարձը

- Սահմանահատում՝ Վավեր անձնագիր, նույնականացման քարտ կամ այլ ճամփորդական փաստաթղթեր:
- Անձնագիր՝ Ստացեք կամ երկարաձգեք Ձեր անձնագիրը Հայաստանի դեսպանատանը կամ հյուպատոսարանում:
- Ծննդյան վկայականներ՝Հայցեք գերմանական իշխանություններից ծննդյան վկայականներ, եթե ձեր երեխաները ծնվել են Գերմանիայում:
- Կրթություն՝ Բերեք Ձեր և Ձեր երեխաների՝ Գերմանիայում ստացած կրթությունը հավաստող փաստաթղթերը:
- Առողջապահություն՝ Բժշկական պատմություններ և այլ կլինիկական գրառումներ՝ հայերեն կամ անգլերեն լեզուներով:
- Դեղորայք՝ Անհատական օգտագործման համար ներմուծումը սահմանափակվում է մինչև 10 դեղամիջոց, յուրաքանչյուրը՝ 3 սպառողական տուփ:
- Բնակարան՝ Գտեք առցանց՝ մինչև Հայաստան ժամանումը:

Վերադարձից հետո

- Գրանցում՝ Հայտնեք Ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը և հաշվառվեք նոր հասցեով, եթե փոխել եք Ձեր բնակության վայրը:
- Քաղաքացիական կացության փոփոխություն՝ Վերադառնալուց հետո թարմացրեք Ձեր տվյալները Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունում, եթե արտերկրում եղել են փոփոխություններ՝ երեխաների ծնունդ, ամուսնություն և այլն:
- Առողջապահություն՝ Այցելեք Ձեր պոլիկլինիկա և անվճար վերականգնեք Ձեր հաշվառումը:
- Սոցիալական աջակցություն և թոշակ՝ Այցելեք Միասնական սոցիալական ծառայության մոտակա գրասենյակ:
- Աշխատանք՝Այցելեք Զբաղվածության պետական գործակալության մոտակա գրասենյակ:
- Կրթություն՝ Դիմեք երեխայի խնամքի, դպրոցների կամ այլ ուսումնական հաստատությունների համար:

9 Վիրտուալ խորհրդատվություն:

Աջակցություն միգրանտներին

Հայաստանում

Վիրտուալ խորհրդատվության նախագիծն իրականացվում է Գերմանիայում Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) կողմից: Գերմանիայում բնակվող միգրանտները, ովքեր մտածում են վերադարձի մասին, կարող են վերադարձի և վերաինտեգրման վերաբերյալ խորհրդատվություն ստանալ ՄՄԿ Հայաստանի աշխատակիցների կողմից: ՄՄԿ Հայաստանի աշխատակազմին կարելի է դիմել առցանց՝ անգլերեն և հայերեն լեզուներով:

Այս ծառայությունը նպատակ ունի օժանդակել միգրանտներին վերադառնալ արժանապատվորեն՝ տեղեկացնելով նրանց վերադարձի և վերաինտեգրման տարբերակների և աջակցության ծրագրերի մասին:

Կապվեք ՄՄԿ Հայաստանի հետ

WhatsApp: +374 431 500 25

+374 431 500 26